# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 101-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐՏԵԶԻ 06-110-0010-0001 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,3968 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Թաթուլ Վովայի Բաղդասարյանի դիմումը,<<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 29.05.1991թ թիվ 2 որոշումը, ժառանգության իրավունքի վկայագիրը /գրանցամատյան 3383, ժառանգական գործ 299, Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 60 և 64 հոդվածներով, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով՝
Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզ Թումանյան համայնքի 06-110-0010-0010 ծածկագրի տակ գտնվող 0.3968 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Փաշա Գրիգորի Բաղդասարյանի /ծնված՝. 02.03.1926թ./սեփականության իրավունքը:
2.Հողամասը չի գտնվում իժիներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:
3.Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 1
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 102-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Թաթուլ Վովայի Բաղդասարյանի դիմումը,ժառանգության իրավունքի N 299 վկայականը՝ տրված 29.10.2001թ. և քաղաքաշինության և հողօգտագործման մասնագետի առաջարկությունը՝
Որոշում եմ.

1.Հանգուցյալ Փաշա Գրիգորի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի,Քարինջ համայնքի (ծածկագիր՝06-110-010-001) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին՝ մակերեսի չափը՝ 0.3968 հա տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Քարինջ,Մ. Մկրտումյանի փողոց, N 63/1 հողամաս) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

2021թ. նոյեմբերի 1
ք.Թումանյան